ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

27.03.2014 07:14

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը մարտի 26-ին, հանդիպել է ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյան ռազմական ինստիտուտի կուրսանտներին և սպայական անձնակազմին և հանդես եկել դասախոսությամբ «Ապացուցման միջոցները» թեմայով: Պալատի նախագահը ներկայացրել է ապացուցման միջոցները քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում: Արա Զոհրաբյանը խոսել է նաև պաշտոնատար անձ-քաղաքացի և սպա-զինվոր հարաբերությունների մասին և նշել, որ,-«**արհեստավարժ քննիչը կարողանում է մեղադրյալին ցույց տալ, որ նրա խնդիրը ոչ թե իր (քննիչի) հետ է, այլ՝ օրենքի: Իսկ ոչ պրոֆեսիոնալ քննիչը մեղադրյալին անձնավորում է, իր սխալների դեմ վերջինիս պայքարը համարում է անձնական վիրավորանք և պատվի հարց՝ ու ատելություն և վրեժխնդրություն սերմանում իրենց փոխհարաբերություններում: Նույն կերպ կարող է զարգանալ սպա-զինվոր փոխհարաբերությունները**»: Հանդիպման մասնակիցներն Արա Զոհրաբյանին ուղղել են իրենց հուզող հարցերը կապված քաղաքացիական և վարչական իրավահարաբերությունների հետ: Փաստաբանների պալատի նախագահը զինծառայողների հարցերի շրջանակներում պարզաբանել է օրենքները, որոնք վերաբերում են տվյալ իրավահարաբերություններին:
Այս հանդիպումով ՀՀ փաստաբանների պալատը մեկնարկում է «Իրազեկ բանակ» փաստաբանական ծրագիրը, որն ուղղված է հայկական բանակի իրավական գիտակցության բարձրացմանը: Այս ծրագիրը իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի միջև տեղի ունեցած հանդիպման արդյունքում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })